

Հորդեմք Շուշի քաղաքէն սկսելով: Այս նպատակաւ քառանիւ փայեթոն մը վարձեցինք մեզ համար, զորիքա մ'ալ թեթև բեռները կրելու. որովհետեւ ծանրը՝ վրաններ, հարկաւոր պաշար, ձիոց կազմած, լուսաղականք, բեռնակառօք յաւաշագոյն զրկած էինք: Փայեթոնը, զերազանց կառք մը, շիտակ պիտի տանի զմեզ ի Շուշի, ուր զրոխան թղթասարութեանց անազանումներու կ'ենթակուի:

Գեղեցիկ է օգը. երկնիքն երեսը ամպ մը չի կայ. ու կապուտակ և մաքուր հորիզոնին վրայ մէկ կողմանէ կը բարձրանան ձեւամք սպիտակափառ լերինք Տաղրասանի՝ նոր բարձրանալու սկսած արևուն ճառագայթից տակ. այնպէս մաքուր և որոշ՝ որ պարզ աշքով կարեի է նկատել, նաև հեռուէն, լերանց ամէն տատիճաննեալ կտրուանքը, զի մշուշի թեթև հետք մ'ալ չի կայ: Հրաշագեղ տեսարան մ'է, և մեր Ալպեաց ընծայած տեսարանին հաւասար՝ արժանաւոր հացման :

Միւս կողմանէ՝ Գարապաղի լերինք ալ կը մրցին սպիտակութեամք և գեղով՝ Տաղրասանի լերանց հետ: Դէպ ի հոն կ'ուղղենք մեր ընթացքը. «Մարզա պէտք է որ երթայ առ լեռանն, որովհետեւ ինց չէ կարող գալ առ մեզ» կ'ըսէ Հայոց ժողովրդական տառձրւ: \* Այս զաղափարը զիս շատ կը զմայլեցունէ, և կը փոթամ՝ զործազրել:

Շարայարելի

## ԱՐԻՍՏՈՏԵԼ ԵՒ ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

ՆՅՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌՅՈՒԻ

**Ա**թն ճշմարիտ և պատմական յարաբերութեանց վրայ որ ունեցան ընդ իրեարս Արիստոտէլ և Մեծն Աղեքսանդր, այսինքն հին իմաստահրաց գերագունին աւանդած դաստիարակութեանն և ուսմանն առ ամենահզօրն յիշխանս՝ զրազեցան ընդհանուր կերպով իրենց գրուածոց մէջ Մէնդ-Քրուա, Տրյուլն և Շդահր. իսկ մասնաւոր հրատարակութեամբք՝ Մելլ, Հէկէլ, որդի իմաստասիրին, և աւելի ընդարձակ և հմուտ կերպով կէյէր:

Սակայն այս վերջինս ալ իւր նախընթացներուն նման՝ տեղ տեղ չափազանցեց Արիստոտելի դասախոսութեանց ըրած ազդեցութիւնն՝ իւր աշակերտին մտաց և գործոց նկատմամք. վասն զի

ամենադժուար է ո' և է ներքին յարաբերութիւն կամ կապ մը դանել կղիտոսի կամ կալիսթենեսի սպանութեանց , արևելեան լսկիրշ և յիմար խրախճանութեանց և մանաւանդ թեքէի աւերման և Արիստոտելի բարոյականին կամ վարդապետութեանց հետ . որոնք Աղեքսանդրի յազդական և փառաւոր պատմութեան մէջ՝ ամօթալի էջ մը ներկայացընեն :

Թէպէտ կէյէր այս չափազանցութենէ զատ՝ ուրիշ պակասութիւն մ'ալ ունի , որով առանց լաւ ընտրութեան կամ յանօգուտս խճողեր է իւր գործը բազմաթիւ վկայութեամբք՝ բայց պառ հանդերձ դարձեալ իւր տեսակին մէջ ամենէն աւելի կատարեան է և շատ ճոխ նիւթին պատշաճեալ վկայութեամբք : Ստկայն հեղինակը միայն պատմական և կամ գէթ այնպէս կարծուած աղբերաց դիմեր է . իսկ Պ. Հերց ջանաց որ իւր ուսումնասիրութիւնը՝ Արիստոտելի և Մեծին Աղեքսանդրի վրայ գտնուած միջնադրեան բանաստեղծական զրուցաց վրայ հիմնէ . ով որ կ'ուզէ այս խնդիրը կատարելապէս ուսումնասիրել՝ այն բանասիրին համար Հէրցի այս գործը շատ կատարեալ և ամենահարկաւոր է . շատ շահագրգիռ և միանգամայն օգտակար է նոյն իսկ սոսկականի մը համար : Վասն զի եթէ պատմաբանի կամ իմաստասիրի մը համար օգտակար է ուսումնասիրել յինքեան իշխանի մը դաստիարակութիւնը , քննել թէ իրականութեան կամ բնութեան վրայ ի՞նչ յեղափոխութիւն կամ բարւորումն կատարած է նաև երևակայութիւնն . այս բանս օգտակար է ոչ միայն առասպեկները կամ զրոյցները կատարելապէս ըմբռնելու համար՝ այլ նաև նոյն ժամանակին բարքն և տիրող գաղափարները ճանչնալու . համար ։ Այս տեսակէտով՝ առասպեկախառն զրոյցք իսկ պատմական հաւաստի փաստեր են՝ որ և օգտակար ծանօթութիւններ մեզի կ'ընծայեն :

Եթէ ցարդ առ մեզ հասած ըլլար Աղեքսանդրի ուսումնակցին Մարսիայ Պէլլացւոյ պատմութիւնը՝ այնպիսի յիշատակարան մը պիտի ունենայինք՝ որ բոլոր միւսները պիտի չնշէր և ոչչացնէր . իսկ այժմ ընդհակառակն հնոց բազմաթիւ վկայութեանց կարօտ ենք՝ Մեծին Աղեքսանդրի Արիստոտելի աշակերտ ըլլալը հաստատելու համար :

Փիլիպպոս ուզելով իւր որդւոյն իրեն վիճակին և ապագային արժանաւոր կրթութիւն մը աւանդել՝ անոր կարգադրութիւնը Ողիմպիայի ազգական լեռնիդասի յանձնեց , որ ուզիլ և խստակեաց անձ մ'էր . իսկ իրբե դաստիարակ՝ կոչեց զլիւսիմաքոս Ակառանիացի . սակայն գժրախտաբար այս ընտրութեան մէջ սիամեցաւ : Այս անձը ցած չողպորթութեամբ Փիլիպպոսի և որդւոյն

բարեհաճութիւնն իրեն գրաւեց . և թերեւս սա իւր աշակերտին մոտաց մէջ ցանեց այն կրից սերմունքը՝ որ քիչ վերջը իւր յաղթական փառքը նսեմացուցին : Շատ հաւանականաբար Ս. Հերոնիմոս և Կուինտիլիանոս ալ ոչ եթէ լւսնիդայի այլ լիւսիմաքռոսի կու տային Աղեքսանդրի առաջին դաստիարակութեան տխուր հետեանքները :

Քիչ վերջը մոտածեց Փիլիպպոս որ լիւսիմաքռոսի տեղ Արիստոտէլը գնէ . վասն զի Մակեդոնիոյ արքունեաց սովորութիւնն էր իշխանաց դաստիարակութիւնը միշտ ամենէն աւելի նշանաւոր իմաստասիրաց յանձնել, և երկրորդ ալ որովհետեւ Արիստոտելի հայրը Փիլիպպոսի բժիշկն և խորհրդականն էր : Ուստի Աղեքսանդր տաստիրեկ տարեկան Արիստոտելի առաջնորդութեան յանձնուեցաւ . սակայն անվաւեր պէտք է համարիլ այն տում սը կամ նամակը՝ զոր Ա. Գելիոս կը համարի թէ Փիլիպպոս գրած ըլլայ առ Արիստոտել Աղեքսանդրի ծննդեան առթիւ : Կուինտիլիանոսի վկայութիւնն ալ սիսալ կը թուի . զի սա կ'ըսէ թէ Արիստոտել՝ գրել և կարգալ սորվեցուց Աղեքսանդրի . Պլոտարχոսի հազորդած ծանօթութիւնն ալ շատ հաւատոց արժանի չէ . իրեւ թէ Աղեքսանդր բոլոր արուեստներն և գիտութիւնները Արիստոտելի առաջնորդութեամբ սորված ըլլայ , նաև զգաղանի վարդապետութիւնն (esotérīque) իմաստափրին : Այս նկատմամբ 'ի Պլոտարքեայ և 'ի Գելիոսէ յիշուած թղթոց անվաւերութիւնըն ապացուցանելը աւելորդ է : Նոյն իսկ ամենախորհուն և ճշմարտասէր մատենագրաց տուած ծանօթութեանց մէջ՝ լոկ պատմական հիմ մը կայ . սակայն այս ալ մոտաւորական բարբարութեան դարուն մէջ նսեմացեալ և խաւարեալ՝ յետոյ 'ի գիտնոց դարձեալ կազմուեր, և բոլորովին կերպարանափոխ եղեր է առասպելախառն զրուցաց մէջ : Հէրցի նորօրինակ և կատարեալ գրուածն ալ՝ ճիշդ այս առասպելախառն զրուցաց վրայ է, զոր յաջորդութար կ'ուզենք քննել :

Առաջին գլխոյն մէջ կը խօսի Արիստոտելի վրայ իւր ուսուցիչ Աղեքսանդրի . և հիմն ունի իրեն Մակեդոնիոյ վրայ գտնուած ամենէն հին քերդուածը, այսինքն Ալբերէկոս Պըզանսոնցիի վէպը (ԺԳ. դար) : Այս բանաստեղծութիւնը՝ որոյ միայն 405 տողերը մեր ձեռքքը հասած են՝ Աղեքսանդրի ուսուցիչները կարգաւ թըւած ժամանակ՝ յանկարծ վեցերորդին կ'ընդհատի՝ Հէրց կը կարծէ իրաւամբ թէ այս վեցերորդն ըլլայ նոյն ինքն Արիստոտել . պատճառ բերելով իւր այս կարծեաց՝ թէ Ալբերէկոսի քերդուածը՝ Լամբրէնդ խառնակեր է, և յիրաւի Ալբերէկոսի աղբիւրն է անտարակոյս վազերիոսի թարգմանութիւնը, որոյ մէջ

վեցերորդ տեղը կը գրաւէ իբր ուսուցիչ իմաստասիրութեան՝ Արխատատէլն այն Մելիտացի : Իմաստասիրին տրուած Մելիտացի այս կոչումը՝ թէ հայերէն և թէ ասոցերէն թարգմանութեանց մէջ ևս կան . և այս յայտնի ապացոյց է յօնարէն վէպին ամենէն աւելի հին գրագրին մէջ ևս գտնուելուն , ուր բառ ամենայն հաւանականութեան Մնաքսիմենեայ հետ յիշուած պէտք է ըլլայ , որ իրմէ առաջ կոչուած էր և յոնիական իմաստասիրաց կարգը դասուած , ուստի աստ կրկին փոփոխութիւն անինք . Արխատատէլ անշուշտ Անաքսիմենոս Լամփակենացոյ տեղ գրուած է , իսկ սա ալ անշուշտ Անաքսիմենոս Մելիտացոյ տեղ : Այս վրիպակը նոյն իսկ միջին դարու մէջ անգրադարձան . և Վինկենտիոս տը Պովէ՛ վաղերիսի թարգմանութենէն օգտուելով՝ Պատմական պատկեր գրաց մէջ Մելիտացոյ Փուջե կամ մը աւելցուց . և . Թակոր Փոն Մաէրլանտ , որ զՊատմական պատկերն ոտանաւորի վերածեց՝ Ալբերիկոսի և Լամբրեխտի նման զանց ըրաւ բոլորովին ուղղագրեալ մասնիկը :

Յիրաւի յիշեալ աղբերաց մէջ՝ Աղեքսանդրի ուսուցիչք հինգ են թուով . սակայն առ Ալբերիկեայ և առ Լամբրեխտի վեց են . զի միջին գարու ասպետական գաղափարը՝ զինամարզութեան ուսուցիչ մ'ալ չնորհեց Աղեքսանդրի :

Ի Ուուողփ Փոն Էմա՞ Կալիստրենես (Callistena) և Նեքսիմենաս (Neximena) անուանց կը հանդիպինք . իսկ Արխատատէլի համար՝ պարզապէս կ'ըսէ թէ կոչուեցաւ 'ի հրահանգել զԱղեքսանդր բարձրագոյն գիտութեանց և արուեստից մէջ . Սիմէոն կղերիկոսի ընծայուած տառնվանկեան (decasyllabic) խմբագրութեան մէջ՝ վեց յիշեալ ուսուցչաց վրայ աւելցուած է իբրև եօթներորդ նաև մոդն Նեկտաներոս . իսկ Արխատատէլ բնաւ չի յիշատակուիր : Հերց հաւատարմութեամբ կը քննէ արևմտեան գրականութեան գործոց բոլոր այն մասը՝ որ կը խօսի Աղեքսանդրի գաստիարակաց և 'ի մասնաւորի Արխատատէլի վրայ . սակայն աւելորդ է զայն մանրամասն քննել , զի լաւագոյն է ամբողջ գործը թարգմանուած տեսնել :

Իսկ արևելեան մատենագիրք՝ Աղեքսանդրի կը թութիւնն և դաստիարակութիւնը՝ Արխատատէլի տուած են . որ Աղեքսանդրի նախահաւէն 'ի Փիլիպպոսէ հաստատեալ յոյն իմաստասիրաց կաճառին նախագահ էր . այլ ըստ Նիզամի (Nizâmi) , Աղեքսանդրի ուսուցին էր նոյն ինքն Արխատատէլի հայրը՝ Նիզամաքրոս , մինչ Արխատատէլ իբր աշակերտակից կը համարուի Աղեքսանդրի :

Առասպեկտախառն զրոյցը՝ Արխատատէլի այլեւայլ ուսուցչութիւնք ընծայած են . սակայն զանազան ժողովրդոց և մատենագրաց

մէջ՝ այս զրոյցներն ալ տարրեր են. Լամբրեխտ առտեղաբաշխութեան ուսուցիչ կը համարի զնա, և Տարտոնի Ապու-Թափեր-իպն-Հասան արաբացւոյն Դար. Պատմ. մէջ՝ կ'ըսուի թէ Արիստուտէլ ուսուցյաց Աղեքսանդրի զատեղագիտութիւն։

Գաղղիական հնագոյն աղբերաց մէջ՝ յորոց ձեւացաւ նաև Աղեքսանդրի վրայ գրուած սպանեղերէն քերգուածք՝ պատանի արքայն կը պարծի՝ թէ բոլոր գիտութիւններն և արուեստներն իւր վարժապետէն ոորվեր է, և Ուղիք Փոն Էշէնպախ՝ յետ ըսկութէ Արիստուտէլ յալփափետաց միսաւ ուսուցանել Աղեքսանդրի՝ պատահաբար կը յաւելու թէ ուսուց նաև զիեզու արաբական։ Սակայն ընդհանրապէս արևմտեան գրականութեան մէջ՝ Արիստուտելի ընծայուածներն են եօրն ազատ արուեստք։

Արևելեան քերդողք ալ բացարձակ կերպով չեն որոշեր. միայն բաց ի արդէն ծանօթ բաներէն՝ ոմանք կը յաւելուն թէ իմաստասէրը պարզեց իւր աշակերտին հմայութիւններն. և թէ այս գիտութիւնը իրեն շատ օգտակար եղաւ երբ պատերազմեցաւ դիւաց կամ չար ոգիներու գէմ։

Արիստուտելի Աղեքսանդրի հետ բռնած կերպին և դատախոսութեանց վրայ յիշատակք՝ շատ քիչ են առասպելախառն զրուցաց մէջ. աւելի որոշ և բացայատ կերպով նկարագրուած է իւր իմաստասէր՝ Յայտնի է թէ Արիստուտէլ հրաւէրքն ընդունեցաւ՝ ի Պելլա, երիտասարդ հասակին մէջ. իսկ ընդհակառակն միջին գարու առասպելք՝ այն ժամանակ մեծ իմաստասէրին վրայ ունեցած գաղափարին հսմենատ, կը նկարագրեն զնա իւր մնրուրոյական և կիւնիկեան ծեր մը. Բայց ոչ այսպէս և արևելցիք, և՝ ի մասնաւորի Արաբք, որ իրենց առասպելաց մէջ կը համարին խոհեմ, բարի և գեղեցիկ անձ մը։

Հէրցի գրոց երկրորդ գլուխը՝ կը ներկայացնէ զԱրիստուտէլ իւր առաջնորդ Աղեքսանդրի. Այս նկատմամբ շինուած առասպելին մի միակ հիմն է՝ Աղեքսանդրի առ Արիստուտէլ գրած մի անվաւեր նամակը, յորում նկարագրուած է իրենց ճանապարհորդութիւնն՝ ի Հնդիկս։

Բազմաթիւ իմաստունք ընկերացած էին Աղեքսանդրի իւր այս ճանապարհորդութեան մէջ, որ և այս արշաւանաց գիտնական կերպարանք մը տուաւ. և այնչափ բնական է հետևցնել որ Արիստուտէլ ևս այս գիտնոց խմբին մամնակցած ըլլայ՝ որ նոյն իսկ Քիւվիէ կը հաստատէ իւր յեղիպտոս երթալը. Նոյն բանը կը հաստատեն նաև արևմտեան ինչ ինչ քերդուածք, յորս կը յիշատակուի թէ Արիստուտէլ ընկերացեր է Աղեքսանդրի՝ ի Հնդիկս. իսկ արևելեան քերդուածոց մէջ՝ Արիստուտէլ կամ միշտ իւր աշակեր-

տին քոյլ կը գտնուի միւս իմաստնոց հետ, և կամ Շիտրի պաշտօնը իրեն կ'ընծայուի՝ որ կ'առաջնորդէ զդիւցազնն յաւիտենական պատասխելութեան և կորովութեան աղբիւրը:

Պէտք է նշանակենք ասու Հէրցի աշխատութեան մէջ գտնուած պարապը. գուրութողացեր է նա, չնենք գիտեր ի՞նչ պատճառաւ, հետևեալ պատմութիւնը՝ որ Նիզամի (Nizamî) քերգութեան մէջ կը գտնուի:

Արքիմեդէս՝ ժամանակին ամենէն վայելուչ և գեղեցիկ պատճեններ Ազերսանդրի արքունեաց մէջ մեծապէս կը գնահատուի. նոյն իսկ Արիստոտէլ զինքը կը սիրէ, իրը որդի կ'ընդունի և մասնաւորապէս առնա կ'ուզզէ իւր գասախօսութիւնները. վասն զի մի բանիքուն և ուշիմ ուշենդիք և եթ լաւագոյն է քան զնազարս որոց պակսի ուղիղ դատումն մնաց. Յանկարծակի քիչ մը ժամանակ Արքիմեդէս ներկայ չի գտնուիր գասախօսութեանց, և հարցեալ յԱրիստոտէլ՝ կը խոսովանի որ գեղեցիկ աղջկան մը վրայ ունեցած սէրն է այս բացակայութեան պատճառը:

Արիստոտէլ Արքիմեդեայ սիրոյն յիմարութիւնը կամ անպատշաճութիւնը ցուցընելու համար՝ կը խնդրէ որ իւր այն սիրոյն առարկայն իրեն ցուցընէ. և մասնաւոր պատրաստուած ըմպելիով մը՝ սյն աղջկան գեղեցկութիւն պատճառող բոլոր հանգամանքներն կը քաշէ կը հանէ. զայս տեսնելով՝ պատճենին խսկոյն կը հեռանայ այն տձեւ զանգուածէն. բայց իւր ցաւն այնքան սաստի՛չ է՝ որ վարժապետը դարձեալ աղջկան իւր նախկին գեղեցկութիւնը կու տայ, վախնալով որ չ'ըլլայ թէ պատճենին յուսահատութենէն ինքզինքը սպաննէ.

Այս գեղեցկուհին Արքիմեդեայ հետ գարւուն մը միայն կ'ապրի, յանկարծական մահը կը յափշտակէ զնա յիւր սիրոյն. Արիստոտէլ միակնութիւն կը վարդապետէ.

Թերեւս Հէրցի աշքէն վրիպեր է այս պատմութիւնը. վասն զի ինքն ալ Համիլէրի հետևեր է՝ որոյ նիզամի քերգութեան առաջին մասը միայն ծանօթ էր, և կը կարծէր թէ քերգովը երկրորդ մասը չէր աւարտած. բայց քիչ վերջը այս մասն ալ գտնուեցաւ. Ստոյն կալիսթենեայ սկիզբը գրուած հաւկթին դէպքը մեկնելու համար՝ մոդ կամ հմայ մը կոշուեր է, որոյ անունն ընդհանրապէս (Antifono) Անտիֆոն կը կոչեն, բայց ումանք ալ զԱրիստոտէլ կը գընեն. ուստի Հէրցի գրոց երրորդ գլխուն մէջ՝ կը նկատուի Արիստոտէլ իրը կախարդ կամ հմայ. Չորրորդին մէջ կը խօսուի այն երկուսաման իշխանաց վրայ՝ զորս արևմտեան առասպելք կ'ընծայեն իրը ընկերակիցս Աղջկասանդրի. և իրը թէ Արիստոտէլ կ'ընտրէ իր աշակերտին ընկերակից այս պալատականները:

Հինգերորդին մէջ՝ Արիստոտէլ կը հանգիստնայ իրը աղատիչ Աթէնքի . և յիրաւի առասպելն իրեն կ'ընծայէ Մնակուիմենայ Լամփասկեցւոյ մասը և երբեմն նոյն իսկ Դիոդինեայ կորնթացւոյ պատմութիւնը :

Վեցերորդ գլուխը նշանաւոր է Լամփերդի Աղեքրասնդրի դիւռ ցագիւերգութեան և կօթիէի Աղեքրասնդրեանց մէջ ըրած ուսումնական բազդատութեամբ ծանօթ է Մարդկային ակն կամ հրաշալի քար կոչուած առասպելն , որ մարդկային ընչասիրութեան անյագ փափազը կը նշաւակէ , որ միայն մահուամբ կ'անհետանայ :

Աղեքրասնդր երկրաւոր դրախտն հաներով անդ բնակող յերանելեաց քար մը կ'ընդունի , որ ձեռվը մարդկային աշաց կը նմանն էր , և կամ վրան աշք մը փորուած էր . այս քարը կշխռքի մը մէկ թաթին վրայ կը դրուի , իսկ սակին և արծաթը միւս թաթին վրայ չեն հաւասարիր նորա ծանրութեան . այն ատեն իմուստուն մը որ շատ հաւանականաբար Աղիստոտէլ է՝ կը գոցէ զարծախն քողով մը և սակաւ մի փոշւով , և իսկոյն կշույն թաթը կը հակի միւս կողմը առանց գժուտարութեան և ոչինչ ծանրութեամբ :

Այս առասպելը կը քննէ Հէրց ամենամեծ հմտութեամբ եօթներորդ գլխուն մէջ . և առասպելին ծագմանէ սկսեալ՝ կը քննէ նոռքա ամէն փոփոխութիւնքն և կտառարածն : Յիրաւի Արիստոտէլ այս երկար գլխուն մէջ՝ պարզ անցողաբար կը յիշատակուի . բայց հեղինակին հմտւա քննադատութիւնը նշանաւոր հետևանքներ յառաջ կը բերէ : կը հաստատէ թէ այս առասպելն 'ի սկզբան բարելական կամ եղիպտական առած մ'էր . և կամաց կամաց փոփութրվ՝ միացաւ Աղեքրասնդրի երկրաւոր դրախտն երթալուն և կամ երանելեաց բնակավայրին հետ՝ ըստ երբայսական գաղափարին : Այս առասպելը նախ և առաջ Թալմուտի մէջ երկեցաւ , և սա ալ իբր համառօտութիւն մը գրաւոր կամ բերանացի երկար պատմութեան մը՝ որ իւր ամբողջութիւնը կը գտնէ Դարձեալ 'ի Դրախտն կոչուած պատմութեամբ :

Աղեքրասնդրի 'ի դրախտն երթալը՝ հեղինակին մտաց մէջ՝ անոր կից առասպել մ'ալ կ'արթնցնէ . այսինքն խաւարակուուն աշխարհաց մէջ՝ կենաց կամ Անմահուրեան աղրիւրը փնտոելը . Հէրց ալ Ռողէնցվայրի նման՝ կը կարծէ թէ այս առասպելին պատմական հիմն է Աղեքրասնդրի ըրած այցելութիւնն յովասիսն Ամմինեան Արամազդայ . բայց ի՞նչ պատճառաւ նոյնը չէ հիմն դարձեալ Աղեքրասնդրի երթալուն 'ի դրախտն . սոոյզ է որ գաղափարական կամ երեսակայական նմանութիւնք՝ շատ աւելի կը յարմարին վերջնոյն՝ քան առաջնոյն , բայց մեզ այնպէս կը թուի թէ նոյն հիմք երկուքին ալ կրնայ ծառայել :

Ուժերորդ գլխուն վերնագիրն է Արիստոտել՝ ի մասնուանն Ա-  
ղեքսանդրի, յորում կը ցուցընէ թէ յառասպելաց ունանք զԱ-  
րիստոտէլ Աղեքսանդրի վերջին վայրկեաններուն ներկայ, իսկ  
այլք ալ բացակայ կը համարին. սակայն միշտ խորհուրդ կու տայ  
և կամ հոգեվարքին յետին հրահանգներն ե կամքը կ'ընդունի:  
Քիչերը կը պնդեն թէ նոյն իսկ Արիստոտէլ մասնակից եղած ըլ-  
լայ Աղեքսանդրի թունաւորման :

իսկ իններորդ և վերջին գլուխը՝ կը հերկայացընէ զԱրիստո-  
տէլ իրը վրեժիսնդիր Աղեքսանդրի, յենրով կի տը Քամպըէի  
Քերդուածին վրայ Հուսկ ուրեմն Հէրց կը վերջացընէ իւր գրուած-  
քը յետահայեաց ավնարկ մը տալով, և համառօտելով իւր քննադա-  
տութիւնքն՝ կը հաստատէ որ Արիստոտէլ ըստ ինքեան շատ տար-  
բերութիւն չունի հասարձնելութեան իր վրայ ունեցած գաղափա-  
րէն, և թէ իր վրայ շինուած առասպելք՝ գրեթէ ամէնն ալ պատ-  
ճական հիմ մ'ունին. Թերևս Արեկելք մասնաւոր կերպով իմաս-  
տասիրին գործերը և բնաւորութիւնը հոչակած է, բայց Արե-  
մուաք՝ սակա. յատկութիւններ, քանի մը գէպքեր և այլոց յա-  
տուկ եղած քանի մը արարք իրեն նուիրեր է:

Հէրցի գրուածքը շատ հմտալից է և միանդամայն յետին աստի-  
ճանի անաչառ քննադատութեամք և մանրամասնօրէն գրուած :

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### ԴԵԳՏԻՆ

**Բ**իչերուն ծանօթ է 'ի Ռէճճիո Էմիլիայէ Փրոսվէրո Պէրդինի  
կոչուած անձի մը այն միջադէպը՝ զոր Յովսէփ Վէրտի յակամայս  
բարձրացուց՝ 'ի պատիւ նշանաւորութեան :

1872ին 'ի Փարմա Մ'այիս ամսոյ մէջ Վէրտի Ախտա ողբեր-  
գութիւնը կը ձեացնէին, և ոէճճիացի պարոնը՝ այս նոր գոր-  
ծոյն համրաւէն գրգռեալ՝ մասնաւոր մեկնեցաւ իւր տունէն,  
19 ֆո. ծախք ընելով ընդ ամէնը, հաշուելով նաև կայարա-  
նին մէջ ըրած «անպիտան ճաշը»: Ողբերգութեան չհաւնեցաւ,  
բայց խզմնուանքը հանդարտեցնելու համար, որովհետեւ ամէնը  
ինչ պանչելի բան է կ'ըսէին, երկրորդ անդամ Փարմա եկաւ,